



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017թ. մարտի 27

N 81 -Ա

ՍԱՐԳԻՍ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
<<ՕՇԱԿԱՆԻ Փ. ԲԱՔԿԵՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Օշականի Փ. Բաքկենյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար 2017 թվականի մարտի 23-ին անցկացված մրցույթի արդյունքները և Ս. Հովնանյանի 2017 թվականի մարտի 24-ի անձնական դիմումը՝ **կարգադրում եմ**։

2017 թվականի մարտի 28-ից Սարգիս Ֆերդինանդի Հովնանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Օշականի Փ. Բաքկենյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ լուծելով 2016 թվականի նոյեմբերի 1-ին նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը։

Գ. ԳՅՈՂԱԼՅԱՆ